ԱԺԸ.

Ի յանցեալ ամս ի գարնանային եղանակի, եկին ի յարևելեան կողմանց այնչափ գունդագունդ բազմութիւն յոյժ մարախաց, մինչ զի իբրև զամբ թանձրամած արգելին զճառագայթս արեգական, և սփռեալ ի դաշտս և ի յարտորայս սպառեցին զամենայն խոտ դալարի։ Իսկ ի յամի յայսմիկ, ի յուլիսի ամսոյն եկին ի շէնս, նաև ի փոքրիկ բուրաստանն մեր, և մեք գնացեալ ծնծղայիւք և զանկակօք փախուցաք. նաև ֆօռն բազմութեամբ ժողովրդոց՝ հանեալ զսրբութիւնն ել ի թափօր։ (Հ. Անդրէաս [Կ. Պոլսեցի Բուզայեան] առ Մխիթար, 1748 օգոստ. 3. [տեղի?])։

ԱԺԹ.

Զցակոբ պատրիարգ փոխեցին յաւուր զատկի յարութեան տեառն, ըստ Հայոց ի մարտի 26, և նստուցին զպրոխորօն կոչեցեալ վարդապետն[1], և գնա աքսորեցին։ Եւ յետ վեց աւուր[2] զպրոխորոն վարդապետն ևս իջուցին յաթոռոյն, և նստուցին զմինաս վարդապետն[3] յաթոռ պատրիարքութեան որ էր առաջնորդ սրբոյ կարապետին։ Իսկ մինաս վարդապետն առ այժմ ոչ է աստ[4]. եդին փոխանակ նորա զյարութիւն վարդապետն[5] արբեցող. մինչև եկեսցէ ի սուրբ կարապետէն մինաս վարդապետն։ (Սարգիս տի մուշատ առ Մխիթար, 1749 ապրիլի 20. [Պոլիս?])։

ԱԻ.

Գրեալք էիք թէ... զանկակատունն[6] եզերեցաւ մինչև ի տեղի զանկակին, և թէ սկսանիմք զպատրաստութիւն տեսանեմք ընտրութեան վասն[7]։ (Հ. Պետրոս վարդապետ առ Հայր Եղիա վարդապետ փոխ. Աբբայի, 1749 սեպտ. 20. [Պոլիս])։

ԱԻԱ.

Մայասուլի... նուսխայի բանն այս է. ա՛ռ տրամ մի մէտիքամէնթա քռեօլ, զի այսպէս կոչի իտալերէն. և երկու օնցա ջղախոտի ջուր վարդէջրի նման հանած, որ իտալերէն կոչի աքուա ֆիանթաճինէ. և երկու օնցա վարդեջուր. խառնեա զսոսա ի միմեանս յանօթ մի և ջերմացո ոչ կարի, այլ եղկ լիցի, և լաթի կտորով քսէ այն գնտացեալ մայասուլն։ Եթէ յոյժ սաստիկ է ցաւն, յաւուրն մի և երկու կամ երեք անգամ. իսկ յորժամ մեղմանայ ցաւն, յաւուրն մի անգամ բաւական է[8]։ (Հ. Եղիա փոխ. Աբբ.ի առ Հ. Թովմաս, 1750 փետր. 23. [Վենետիկ])։

---

1. Սիլիստրացի Պրոխորոն վարդապետ, որ Երուսաղէմէն եկած էր զէպքէն ոչ շատ առաջ։
2. Իսկ ըստ Զամչեանի Պատմութեան՝ «Յեօթներորդում աւուր»։ (Հտր. Գ. էջ 863)։
3. Ակնեցի։
4. Այդ ժամանակները Կարին կը գտնուէր։
5. «Կոստանդնուպօլսեցի ի Պալատայ՝ զաշակերտ Յովհաննու Կոլոտի». (Զամչ. Պատմ. Հտր. Գ. էջ 863)։
6. Ս. Ղազարու։
7. Կ'ակնարկէ Մխիթար Աբբահօր յաջորդի ընտրութիւնը, մեռած ըլլալով Հիմնադիրը հինգ ամիսէ ի վեր։
8. Աւելորդ չհամարեցայ նշանակել այս դեղագիրը՝ որ կրնայ հետաքրքրել մեր Հայ բժիշկները։